

Որակի հոշակագիր Օտարերկրյա ներդրումներ

| 0 Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին |   |   |
|---|---|---|
| 0.1   | Անվանումը                                 | Օտարերկրյա ներդրումներ  |
| 0.2   | Ոլորտը                                    | Արտաքին առևտուր   |
| 0.3   | Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն | Արմստատ<br>Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժին<br>Բաժնի պետ<br>Քրիստինե Պողոսյան<br><br>Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3<br>Հեռախոս՝ +374 11 583 995<br>Էլ. փոստ <a href="mailto:kristina@armstat.am">kristina@armstat.am</a> , <a href="mailto:info@armstat.am">info@armstat.am</a>   |
| 0.4   | Նպատակը և պատմությունը                    | Տեղեկատվությունը անհրաժեշտ է օտարերկրյա ներդրումների վերաբերյալ ամփոփ տվյալներ ստանալու և այն ՀՀ վճարային հաշվեկշռի կազմման աշխատանքներում օգտագործելու համար, ինչպես նաև օգտագործողներին տրամադրելու անհրաժեշտ տեղեկատվություն օտարերկրյա ներդրումների վերաբերյալ ըստ երկրների, ըստ տնտեսական գործունեության տեսակների:  |
| 0.5   | Օգտագործողները և կիրառումը                | Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:<br><br>Օտարերկրյա ներդրումների ցուցանիշները կիրառվում են տնտեսության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, տնտեսության ճյուղերում օտարերկրյա ներդրումների վերլուծության, բիզնես միջավայրի վերլուծության, սոցիալական զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով: |
| 0.6   | Տեղեկությունների աղբյուրները              | Ցուցանիշի կազմման հիմնական աղբյուրներն են՝ վիճակագրական հաշվետվություններով իրավաբանական անձանցից եռամսյակային պարբերականությամբ հավաքվող տեղեկությունները, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկից ստացված օտարերկրյա ներդրումների որոշ ցուցանիշների վերաբերյալ ամփոփ տվյալները:  |

|                          |   |   |
|--------------------------|---|---|
| 0.7                      | Տվյալների հավաքման իրավական լիազորությունը                                      | Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:  |
| 0.8                      | Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը | Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:  |
| <b>1 Բովանդակություն</b> |   |   |
| 1.1                      | Բովանդակության նկարագիրը  | Օտարերկրյա ներդրումները ընդգրկում են այն տվյալները, որոնք վերաբերվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ստեղծված կազմակերպությանը, որի բաժնետիրական կապիտալում ոչ ռեզիդենտ միավորը ունի մասնակցություն, ինչպես նաև տվյալներ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ միավորների կողմից ոչ ռեզիդենտ միավորների մոտ կատարած ներդրումների , օտարերկրյա ուղղակի ներդրումներով իրավաբանական անձանց վճարած շահութահարկի, կապիտալի մասնակցությունից եկամուտների և չբաշխված շահույթի, պորտֆելային և այլ ներդրումներով կազմակերպությունների կողմից օտարերկրյա ներդրողներին վճարված տոկոսավճարների և շահութաբաժինների, նաև հաշվետու եռամսյակում կազմակերպության աշխատողների միջին ցուցակային թվաքանակի և արտադրանքի, ապրանքների, աշխատանքի, ծառայությունների իրացումից ստացված գույտ հասույթի վերաբերյալ: |
| 1.2                      |   | <p><b><u>Օտարերկրյա ներդրում</u></b> – Գույքի ցանկացած տեսակ, այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ, որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի/եկամտի ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով: Օտարերկրյա ներդրումներն ըստ տեսակի լինում են՝</p> <p><b>ուղղակի</b></p> <p><b>պորտֆելային</b></p>   |

|  |  |
|--|--|
|  | <p><b>այլ ներդրումներ</b></p> <p><b>Ուղղակի ներդրում</b> կատարվում է օտարերկրյա ներդրողների կողմից, որոնք ձգտում են ձեռք բերել ուղղակի ներդրումով կազմակերպության գործունեության վրա կայուն, տևական ազդեցություն: Ուղղակի ներդրող է համարվում ոչ ռեզիդենտ միավորը, նրա հետ կապված կամ համագործակցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը, որին պատկանում է տվյալ երկրի ռեզիդենտ միավորի բաժնետիրական կապիտալի ոչ պակաս, քան 10% –ը; Ուղղակի ներդրումները լինում են՝</p> <p><b>կանոնադրական և էմիսիոն կապիտալի</b></p> <p><b>ուղղակի ներդրողի մասնաբաժնի կազմակերպության սեփական կապիտալի այլ տարրերում</b></p> <p><b>պարտքային գործիքների</b></p> <p>Ուղղակի ներդրումները կանոնադրական և էմիսիոն կապիտալում իրականացվում են կազմակերպությունների բաժնետոմսերի, բաժնեմասերի և փայամասնակցության տեսքով, այսինքն՝ երբ մեկ այլ կազմակերպություն տնօրինում է նրան ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (հասարակ բաժնետոմսեր, բաժնեմասեր, փայեր) ոչ պակաս, քան 50%-ը (դուստր ընկերություն), և երբ մեկ այլ կազմակերպություն տնօրինում է նրան ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10-50%-ը (կախյալ ընկերություն):</p> <p>Ուղղակի ներդրողի մասնաբաժինը կազմակերպության սեփական կապիտալի այլ տարրերում՝ չբաշխված շահույթի մեծությունն է ավելացված պահուստային կապիտալի մեծությունը, որից հետո ստացված մեծությունը բազմապատկվում է ուղղակի ներդրողների մասնաբաժնով (%-ով):</p> <p>Ուղղակի ներդրումները պարտքային գործիքներում իրականացվում են պարտատոմսերի, այլ արժեթղթերի (բացի բաժնետոմսերից), վարկերի, փոխառությունների, ավանդների, այլ պահանջների/պարտավորությունների տեսքով, որոնք իրենցից ներկայացնում են պահանջներ/պարտավորություններ ուղղակի ներդրողի կամ նրա հետ կապված կազմակերպության նկատմամբ:</p> <p><b>Պորտֆելային ներդրում.</b> Օտարերկրյա ներդրողների այն կապիտալ ներդրումներն են, որոնք թույլ են տալիս օտարերկրյա ներդրումով կազմակերպությունում ունենալ սահմանափակ ազդեցություն և ստանալ</p> |
|--|--|

|  |  |
|--|--|
|  | <p>որոշակի շահույթ, որը կարգավորվում է կողմերի միջև կնքվող պայմանագրով: Պորտֆելային ներդրումները լինում են կապիտալի մասնակցության արժեթղթերի և պարտքի արժեթղթերի տեսքով:</p> <p><b>Այլ ներդրումը</b> ներառում է բոլոր տեսակի ֆինանսական գործառնությունները, որոնք չեն ընդգրկվել ուղղակի և պորտֆելային ներդրումներում: Այլ ներդրումները լինում են վարկերի և փոխառությունների, ապրանքների և ծառայությունների դիմաց վճարվելիք գումարների, ստացված/ստացվելիք կանխավճարների, կանխիկ դրամական միջոցների, ավանդների և բանկային հաշիվների, վճարման/ստացման ենթակա այլ հաշիվների և այլ սեփականության տեսքով:</p> <p>Վարկերը և փոխառություններն այն ֆինանսական գործիքներն են, որոնք վարկատուն տրամադրում է վարկառուին պայմանագրի միջոցով: Այս խմբում ընդգրկվում են վարկերը (ներառյալ՝ առևտրային գործառնությունների ֆինանսավորման համար վերցված վարկերը և օվերդրաֆտ մեխանիզմով տրամադրված միջոցները), հիփոթեքային վարկերը, փոխառությունները, ինչպես նաև ֆինանսական վարձակալության (լիզինգի) վերաբերյալ պայմանագրերը:</p> <p>Ապրանքների/ծառայությունների դիմաց վճարվելիք/ստացվելիք գումարները, ստացված/տրված կանխավճարները ներառում են կարճաժամկետ և երկարաժամկետ պահանջները և պարտավորությունները, որոնք առաջացել են մատակարարների կողմից ապրանքների և ծառայությունների դիմաց հետագա վճարման պայմանով ուղղակի տրամադրման կամ ապրանքների և ծառայությունների ստացման համար գնորդի կողմից կանխավճարների տրման դեպքում: Այն վարկերը, որոնք կապված են առևտրային գործարքների հետ և տրամադրված են երրորդ կողմից, օրինակ՝ բանկերից ներառվում են ոչ թե առևտրային վարկերի, այլ՝ վարկերի մեջ:</p> <p>Կանխիկ դրամական միջոցները ներառում են կազմակերպության արտարժույթը դրամարկղում կամ դրամական միջոցները ճանապարհին՝ այլ երկրների թղթադրամների և մետաղադրամների տեսքով:</p> <p>Ավանդները և բանկային հաշիվները ներառում են</p> |
|--|--|

|  |  |
|--|--|
|  | <p>կազմակերպության ավանդները և բանկային հաշիվները ոչ ռեզիդենտ (օտարերկրյա) բանկերում և չեն ներառում ՀՀ բանկերում արտարժույթային ավանդները:</p> <p>Վճարման/ստացման ենթակա այլ հաշիվները հիմնականում ներառում են ժամկետանց պարտքերը և դեբիտորական/կրեդիտորական պարտքերը՝ կապված հարկերի, արժեթղթերի գնման և վաճառքի, ինչպես նաև աշխատողների աշխատանքի վարձատրության հետ, եթե դրանք առաջացել են ՀՀ ռեզիդենտի և ՀՀ ոչ ռեզիդենտի միջև իրականացված գործառնությունների ժամանակ: Կախված մարման ժամկետներից, առանձնացվում են կարճաժամկետ և երկարաժամկետ ակտիվներ/պարտավորություններ: Երկարաժամկետ ակտիվները/պարտավորություններն ունեն մեկ տարուց ավել սկզբնական մարման ժամկետ կամ լինում են անժամկետ: Կարճաժամկետ պարտավորություններն ունեն մեկ տարի և պակաս մարման ժամկետ:</p> <p>Այլ սեփականությունը ընդգրկում է կազմակերպությունների կողմից, որպես սեփականություն, արտերկրում ձեռք բերված անշարժ գույքի (հող, բնակարան, առանձնատուն) արժեքը:</p> <p><b>ՀՀ ռեզիդենտ է</b> համարվում ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, ցանկացած իրավաբանական անձը (ձեռնարկությունը) կամ ՀՀ տարածքում գործող որևէ այլ տնտեսավարող սուբյեկտը, որի մշտական գտնվելու վայրը (ֆիզիկական անձանց համար բնակության վայրը) կամ տնտեսական շահերի կենտրոնը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:</p> <p><b>Աշխարհագրական ընդգրկունություն</b></p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և Երևան քաղաքը:</p> <p><b>Հրապարակման խմբավորումներ</b></p> <p>Տվյալները հրապարակվում են հետևյալ խմբավորումներով՝</p> <p>Օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• ըստ երկրների</li> <li>• ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի ՏԳՏՀԴ խմբ. 2 երկնիշ մակարդակի</li> <li>• հոսքերի բաշխվածությունն ըստ գործունեություն</li> </ul> |
|--|--|

|                            |                          |   |
|----------------------------|--------------------------|---|
|                            |                          | <p>տեսակերկիր կտրվածքի</p> <ul style="list-style-type: none"> <li>• համախառն հոսքերն և մաքուր պաշարներն ըստ երկրների և տնտեսական գործունեության տեսակների տվյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ</li> <li>• ՀՀ ֆինանսական կազմակերպություններում ոչ ռեզիդենտների կողմից</li> <li>• բաժնետիրական կապիտալում իրականացրած ուղղակի, պորտֆելային ներդրումները և տրամադրված վարկերն ըստ երկրների:</li> </ul>           |
| <b>2 Ժամանակայնություն</b> |                          |   |
| 2.1                        | Հաշվետու ժամանակահատվածը | Եռամսյակային  |
| 2.2                        | Հրապարակման ամսաթիվը     | Օտարերկրյա ներդրումների վերաբերյալ առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակներին ստացվող տվյալները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 60/62-րդ օրը, իսկ չորրորդ եռամսյակի՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 90-րդ օրը:   |
| 2.3                        | Ճշտապահություն           | Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:   |
| 2.4                        | Հաճախականությունը        | Եռամսյակային  |
| <b>3 Ճշգրտություն</b>      |                          |   |
| 3.1                        | Ընդհանուր ճշգրտություն   | <p>Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:</p> <p>Հետազոտությունը գլխավորապես հիմնված է իրավաբանական անձանց համատարած դիտարկումների վրա: Հետազոտության մեջ տնտեսավարող սուբյեկտների ընդգրկումը և դրանց կողմից վիճակագրական տեղեկությունների պարտադիր տրամադրումն ամրագրված է վիճակագրության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերում:</p> <p>Պատասխանների մակարդակը մոտ 98% է:</p> |
| 3.2                        | Անճշտության աղբյուրները  | Տվյալների հավաքումն իրականացվում է բիզնես ռեզիստրի արդիականացված բազայից վերցված համապատասխան գործունեությամբ զբաղվող օտարերկրյա ներդրումով իրավաբանական անձանց ցանկի հիման վրա, ընդ որում տեղեկատվությունը   |

|                           |  |   |
|---------------------------|--|---|
|                           |  | հավաքվում է համատարած, կիսամյակային կտրվածքով:  |
| 3.3                       | Ճշգրտության չափումները/<br>չափելիությունը                  | Ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունների կողմից ներկայացված տվյալների ճշգրտությունը իրականացվում է ֆինանսների վիճակագրության բաժնի տվյալ տարվա նույն ժամանակաշրջանի համար ներկայացված համապատասխան տվյալների հետ համադրման միջոցով:  |
| <b>4 Համադրելիություն</b> |  |   |
| 4.1                       | Ժամանակագրական համադրելիություն                            | Մինչև 1998թ.-ը ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998-2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄՍԿ): Սկսած 2002թ.-ից ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված Եվրոպական համայնքների վիճակագրական կոմիտեի կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE հիման վրա): 2010թ.-ից կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2-ը: |
| 4.2                       | Համադրելիությունն այլ վիճակագրության հետ                   | Բացակայում է  |
| 4.3                       | Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը | Հրապարակված տվյալներն որակվում են վերջնական: Տնտեսավարող սուբյեկտների կողմից հաշվետվությունները ուշացումով ներկայացնելու դեպքում դրանք ներառվում են հաջորդ եռամսյակի աճողական տվյալներում:  |
| <b>5 Մատչելիություն</b>   |  |   |

|     |   |  |
|-----|---|--|
| 5.1 | Տարածման ձևաչափ                                   | <p><b>Հրապարակումներ</b></p> <p><b><u>Եռամսյակային հրապարակումներ</u></b><br/> «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն և ռուսերեն):</p> <p><b><u>Տարեկան էլեկտրոնային հրապարակումներ</u></b><br/> «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն):</p> <p><b><u>Տվյալների բազա</u></b></p> <p><a href="http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</a></p> <p><b><u>Ինտերնետային հասցե</u></b><br/> Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն հետևյալ հասցեով.<br/> <a href="http://www.armstat.am/am/?nid=82">http://www.armstat.am/am/?nid=82</a></p> |
| 5.2 | Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը | <p>Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են</p> <p>Իրավաբանական անձանց համար.<br/> ա/ իրավաբանական անձի ծածկագիրը<br/> բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),<br/> գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը,<br/> դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը,<br/> ե/ կազմակերպական-իրավական ձևը,<br/> զ/ իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն,<br/> է/ փաստացի գործունեության հիմնական տեսակը<br/> ը) տվյալ կազմակերպության ղեկավարի և լրացնողի անունը, ազգանունը և հեռախոսի համարը:</p>   |
| 5.3 | Փաստաթղթավորումը                                  | <p>Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=373">https://www.armstat.am/am/?nid=373</a>:</p>   |
| 5.4 | Այլ տեղեկատվություն                               | <p>Օտարերկրյա ներդրումների վերաբերյալ ցուցանիշների հաշվարկման առավել մանրամասն տեղեկատվությունը գետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2013թ. օգոստոսի 7-ի «Օտարերկրյա ներդրումների</p>  |



|                                    |  |  |
|------------------------------------|--|--|
|                                    |  | <p>մասին» ձև թիվ 9-Ներդրում (եռամսյակային) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 07-Ն որոշմամբ: Մեթոդաբանական պարզաբանումներ են առկա նաև «Հայաստանի վիճակագրական տարեգրքում»:</p> |
| <b>6 Լրացուցիչ փաստաթղթավորում</b> |  |  |
|                                    |  | Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չեն:  |